ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2019 թվականի N 19

## ԳԵՎՈՐԳ ՌԱՇԻԴԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Մեղրի համայնքի ք.Ագարակ , Իսահակյան փ. շենքի 8բ հասցեի բնակիչ Գևորգ Ռաշիդի Շահնազարյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի դեկտեմբերի 21 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 21.12.2018թ. տրված N119598735454154159 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող KAMAZ 53212 մակնիշի, 32 LU 532 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Գևորգ Ռաշիդի Շահնազարյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2012-2018 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 181 587 (մեկ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր ութսունյոթ ) ՀՀ դրամ:

2019 թվականի հունվարի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գևորգ Շահնազարյանը (հիմք՝ 08.01.2019թ. փոստ. անդորրագիր) : Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի (ուժը կորցել է 01.01.2018թ) 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018թ.) 401-րդ հոդվածի 1-ն մասի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ, իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ.) 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 330-րդ, 46-րդ հոդվածի 3-րդ մասի, 401-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի,«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Գևորգ Ռաշիդի Շահնազարյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 181 587 (մեկ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, որպես KAMAZ 53212 մակնիշի 32 LU 532 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 60837 (վաթսուն հազար ութ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Շահնազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 23
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2019 թվականի N 20

### ԳԱԳԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի բաժնի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 28-ին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ >> օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ Ագարակ քաղաքի Ալավերդյան փողոցի տուն 12 հասցեի բնակիչ Գագիկ Բորիկի Մովսեսյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող իջևանատան հարակից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ իրականացվել է շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Հայտնաբերված իրավախախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հունվարի 23-ին հրավիրվել են վարույթի լսումներ, որին մասնակցելու,գործի փաստական հանգամանքների քննարկմանը մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գագիկ Մովսեսյանը (հիմք՝ 18.01.2019թ. առձեռն ստացված ծանուցագիր): Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն 28 դեկտեմբերի 2018 թվականի կազմված արձանագրության՝ Գագիկ Մովսեսյանը Մեղրի-Ագարակ մայրուղու ձախ կողմում ինքնակամ, առանց թույտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ: Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարզային վարչության Մեղրիի բաժնից ստացված գրությունը և կից փաստաթղթերը (մուտք՝ 09 հունվարի 2019թ. N03),Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի զեկուցագիրը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ինքնակամ կառույցի լուսանկարները:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և

համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:
<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները քննում են 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:Տեղական ինքնակառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն համայնքի ղեկավարները:
<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված դեպքում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:
Նկատի ունենալով, որ Գագիկ Մովսեսյանի կողմից կատարված արարքը վարչական իրավախախտում է , նախատեսված է <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունով, ինչպես նաև ապահովելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 2191-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերություններով, 37-րդ հոդվածի 1-ին պարբերության, 245, 249, 251, 252, 275, 276, 279, 281, 282 և 283 հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Գագիկ Բորիկի Մովսեսյանին <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքային սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու փաստով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք՝ 400000 ( չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2.<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305 -րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, Մեղրի համայնքի 900305081276 հաշվարկային հաշվեհամարին: Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ երկամսյա ժամկետում:
3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին երկու ամսվա ընթացքում, կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 23
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2019 թվականի N 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐԾՐՈՒՆԻ ԵՐՎԱՆԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 103 որոշումը և Արծրունի Երվանդի Հարությունյանի գնման նախապատվության առաջարկությունը ընդունելու մասին համաձայնագիրը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցի թիվ 17/40 հասցեում գտնվող, օրինական ճանաչված 14 քառ.մ մակերեսով շինությունը (առևտրի սրահ), (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.01.2019թ. N 11012019-09-0001 վկայական) և նրա համար սահմանված կարգով առանձնացված 0.0014 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0027-0014) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով, 108 360 (մեկ հարյուր ութ հազար երեք հարյուր վաթսուն) և 7392 (յոթ հազար երեք հարյուր իններորդ) ՀՀ դրամով օտարել կառույցն իրականացրած ֆիզիկական անձ՝ Արծրունի Երվանդի Հարությունյանին:
2.Ընդունել ի գիտություն, որ անշարժ գույքի առքուվաճառքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
3.Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 24
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2019 թվականի N 22

## <<ՖԻՆՔԱ>> ՈՒՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ 18-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 108-Ն որոշումները, <<ՖԻՆՔԱ>> ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019 թվականի հունվարի 15-ի N 200-Տ հայտը՝

որոշում եմ՝

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազ փողոցի թիվ 4/6 հասցեում գործող (իրավաբանական հասցե՝ ՀՀ քաղաք Երևան Ագաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 00445174) <<ՖԻՆՔԱ>> ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությանը՝ տեղադրել (տեղաբաշխել) 13,756 քմ այլ արտաքին գովազդ:
2.<<ՖԻՆՔԱ>> ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությանը՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայքնապետարանի 900305081391 հաշվեհամարին մուծել 247 608 ( երկու հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր ութ ) ՀՀ դրամ տեղական տուրք ՝ այլ արտաքին գովազդ տեղադրելու (տեղաբաշխելու) թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 24
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2019 թվականի N 23

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 -Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը և Ռոմիկ Սարգսյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. հունվարի 17-ի N125-Ֆ հայտը՝

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Ռոմիկ Սարգսյանին (գրանցման համարը՝ 79.00301) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ-Մեղրի-մաքսատուն խաչմերուկի հարևանությամբ գտնվող լիցքավորման կետում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 25
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2019 թվականի N 24

## ԲՈՐԻՍ ԳՐԻԳՈՐԻ ԱԶԱՏՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Բորիս Ազատյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի հունվարի 22-ի N198 դիմումը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում գտնվող, Բորիս Գրիգորի Ազատյանին ժառանգության իրավունքով պատկանող (ժառանգության վկայականը տրված՝ 22.01.2019թ., սեղանամատյանում գրանցված 52-ով) հողամասերին տրամադրել՝
1)09-005-0315-0014 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,039 հա մակերեսով տնամերձ հողամասին՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գյուղ Լեհվազ, Լիճքվազ թաղամաս թիվ 15/4>> հասցե,
2)09-005-0701-0023 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,09 հա մակերեսով տնամերձ հողամասին՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, ՀԷԿ-ի թիվ 1/23>> հասցե,
3)09-005-0705-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության 0,021 հա մակերեսով տնամերձ հողամասին՝ <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, ՀԷԿ-ի թիվ 5/29>> հասցե:
2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բորիս Ազատյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 29
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 հունվարի 2019 թվականի N 25

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունվարի 30
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ղեկավարի
2019 թվականի հունվարի 30-ի N25 որոշման

*Պատվիրատու՝* ***Մեղրիի համայնքապետարան***

*Անվանումը՝ Մեղրի համայնքի 2019 թվականի գնումների պլան*

*Ֆինանսավորման աղբյուրը՝ Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջե*

**Գնման առարկայի**

| Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասա-կարգման | Անվանումը | Գնման ձև (ընթացա-կարգը | Չափման միավորը | Միավորի գինը | Գումարը (դրամ) | Քանակը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| *բաժին 01, խումբ 01, դաս 01, 1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում* | | | | | | |
| | **Ապրանքներ** | | | | 3300000 | |
| 22811150 | նոթատետրեր/ 1 | ՄԱ | հատ | 800 | 24000 | 30 |
| 22811150 | նոթատետրեր/ 2 | ՄԱ | հատ | 1000 | 20000 | 20 |
| 22811170 | կպչուն թերթիկներ նշումների համար | ՄԱ | հատ | 200 | 10000 | 50 |
| 30192710 | սոսինձ | ՄԱ | հատ | 200 | 10000 | 50 |
| 30192100 | ռետին հասարակ | ՄԱ | հատ | 50 | 2500 | 50 |
| 30192114 | թանաք, կնիքի բարձիկի համար | ՄԱ | հատ | 200 | 800 | 4 |
| 30192122 | ինքնահոս գրիչ | ՄԱ | հատ | 50 | 10000 | 200 |
| 30192128 | գրիչ գելային | ՄԱ | հատ | 100 | 5000 | 50 |
| 30192130 | մատիտներ | ՄԱ | հատ | 50 | 2500 | 50 |
| 30192133 | սրիչ, սովորական | ՄԱ | հատ | 100 | 2000 | 20 |
| 30192780 | էջաբաժանիչ/ 5 գույն | ՄԱ | հատ | 150 | 3000 | 20 |
| 30192930 | ուղղիչ գրիչներ | ՄԱ | հատ | 250 | 12500 | 50 |
| 30193700 | թղթադարակ, հարկերով, պլաստմասե մեծ | ՄԱ | հատ | 3000 | 60000 | 20 |
| 30193700 | թղթադարակ, հարկերով, պլաստմասե | ՄԱ | հատ | 2000 | 40000 | 20 |
| 30197111 | կարիչի մետաղալարե կապեր, փոքր | ՄԱ | տուփ | 150 | 7500 | 50 |
| 30197112 | կարիչի մետաղալարե կապեր, միջին | ՄԱ | տուփ | 200 | 6000 | 30 |
| 30197230 | թղթապանակ/ արագակար | ՄԱ | հատ | 80 | 24000 | 300 |
| 30197230 | թղթապանակ/ կապիչով | ՄԱ | հատ | 600 | 36000 | 60 |
| 30197230 | թղթապանակ/ ռեգիստրատոր | ՄԱ | հատ | 700 | 42000 | 60 |
| 30197231 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | ՄԱ | հատ | 14 | 70000 | 5000 |
| 30197622 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | ՄԱ | կգ | 2400 | 600000 | 250 |
| 30197646 | թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ | ՄԱ | կգ | 4400 | 8800 | 2 |
| 39263510 | սեղմակ, փոքր | ՄԱ | հատ | 60 | 1800 | 30 |
| 39263520 | սեղմակ, միջին | ՄԱ | հատ | 80 | 1600 | 20 |
| 39830000 | Մաքրող արտադրանք /կենցաղային, տնտեսական ապրանքներ/ | ՄԱ | հատ | 300000 | 300000 | 1 |
| 09410000 | Գազային վառելիք | ՄԱ | խմ | 210 | 1260000 | 6000 |
| 34331300 | Ավտոմեքենաների պահեստամասեր | ՄԱ | հատ | 740000 | 740000 | 1 |
| | **Ծառայություններ** | | | | 10280000 | |
| 60121100 | Տաքսի ծառայություններ | ՄԱ | դրամ | 1000000 | 1000000 | 1 |
| 50311120 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | ՄԱ | դրամ | 600000 | 600000 | 1 |
| 50111170 | Մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 800000 | 800000 | 1 |
| 92410000 | Թերթերի բաժանորդագրության ծառայություններ | ՄԱ | դրամ | 100000 | 100000 | 1 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 92420000 | Թերթերում հայտարարությունների տպագրման ծառայություններ | ՄԱ | դրամ | 300000 | 300000 | 1 |
| 64210000 | Հեռախոսային ծառայություններ | ՄԱ | դրամ | 486000 | 486000 | 1 |
| 64111200 | Փոստային ծառայություններ | ՄԱ | դրամ | 230000 | 230000 | 1 |
| 72400000 | Համացանցային ծառայություններ | ՄԱ | դրամ | 984000 | 984000 | 1 |
| 66510000 | Ապահովագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 330000 | 330000 | 1 |
| 65311100 | Էլեկտրականության բաշխում | ՄԱ | դրամ | 5000000 | 5000000 | 1 |
| 65110000 | Ջրի բաշխում | ՄԱ | դրամ | 200000 | 200000 | 1 |
| 79521100 | Ձևաթղթերի կազմման, լամինացման և այլ ծառայություններ | ՄԱ | դրամ | 150000 | 150000 | 1 |
| 79810000 | Տպագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 100000 | 100000 | 1 |
| *բաժին 01, խումբ 03, դաս 01. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ՔԿԱԳ/* | | | | | | |
| | **Ապրանքներ** | | | | 60000 | |
| 39830000 | Մաքրող արտադրանք /կենցաղային, տնտեսական ապրանքներ/ | ՄԱ | դրամ | 10000 | 10000 | 1 |
| 30000000 | Գրասենյակային ապրանքներ | ՄԱ | դրամ | 50000 | 50000 | 1 |
| | **Ծառայություններ** | | | | 76400 | |
| 64000000 | Կապի ծառայություններ | ՄԱ | դրամ | 50000 | 50000 | 1 |
| 65311100 | Էլեկտրականության բաշխում | ՄԱ | դրամ | 26400 | 26400 | 1 |
| *բաժին 01, խումբ 03, դաս 03. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ* | | | | | | |
| | **Ծառայություններ** | | | | 944400 | |
| 48000000 | Համակարգչային ծառայություններ /ՀԾ/ | ՄԱ | դրամ | 230000 | 230000 | 1 |
| 48000000 | Համակարգչային ծառայություններ /meghri.am/ | ՄԱ | դրամ | 372000 | 372000 | 1 |
| 48000000 | Համակարգչային ծառայություններ | ՄԱ | դրամ | 302400 | 302400 | 1 |
| 48000000 | Մասնագիտական ծառայություններ | ՄԱ | դրամ | 40000 | 40000 | 1 |
| *բաժին 01, խումբ 06, դաս 01. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ* | | | | | | |
| | **Ապրանքներ** | | | | 5445000 | |
| 44111200 | Ցեմենտ | ԷԱՃ | կգ | 43 | 4945000 | 115000 |
| 44110000 | Շինարարական նյութեր | ՄԱ | դրամ | 500000 | 500000 | 1 |
| | **Աշխատանքներ** | | | | 37382597 | |
| 45231270 | Հանգստի տարածքների վերանորոգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 37382597 | 37382597 | 1 |
| | **Ծառայություններ** | | | | 4400720 | |
| 71351540 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | ԳՀ | դրամ | 600720 | 600720 | 1 |
| 75000000 | Ներկայացուցչական ծախսեր | ՄԱ | դրամ | 800000 | 800000 | 1 |
| 70000000 | Անշարժ գույքի հետ կապված ծառայություններ | ՄԱ | դրամ | 1000000 | 1000000 | 1 |
| 71250000 | Չափագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 1000000 | 1000000 | 1 |
| 71221300 | Քաղաքային բնակավայրերի քարտեզագրման ծառայություններ | ՄԱ | դրամ | 1000000 | 1000000 | 1 |
| *բաժին 04, խումբ 02, դաս 04. Ոռոգում* | | | | | | |
| | **Աշխատանքներ** | | | | 70936040 | |
| 45211134 | Լողավազանների կառուցման աշխատանքներ/Լեհվազ | ԳՀ | դրամ | 11508610 | 11508610 | 1 |
| 45211134 | Լողավազանների կառուցման աշխատանքներ/Կարճևան | ԳՀ | դրամ | 12998470 | 12998470 | 1 |
| 45211134 | Լողավազանների կառուցման աշխատանքներ/Նռնաձոր | ԳՀ | դրամ | 12453640 | 12453640 | 1 |
| 45211134 | Լողավազանների կառուցման աշխատանքներ/Ագարակ | ԳՀ | դրամ | 33975320 | 33975320 | 1 |
| | **Ծառայություններ** | | | | 1550000 | |
| 98111140 | Հեղինակային հսկողության ծառայություն/Լեհվազ | ՄԱ | դրամ | 56900 | 56900 | 1 |
| 98111140 | Հեղինակային հսկողության ծառայություն/Կարճևան | ՄԱ | դրամ | 64300 | 64300 | 1 |
| 98111140 | Հեղինակային հսկողության ծառայություն/Նռնաձոր | ՄԱ | դրամ | 61600 | 61600 | 1 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 98111140 | Հեղինակային հսկողության ծառայություն/Ագարակ | ՄԱ | դրամ | 167700 | 167700 | 1 |
| 71351540 | Տեխնիկական հսկողության ծառայություններ/Լեհվազ | ԳՀ | դրամ | 189800 | 189800 | 1 |
| 71351540 | Տեխնիկական հսկողության ծառայություններ/Կարճևան | ԳՀ | դրամ | 214400 | 214400 | 1 |
| 71351540 | Տեխնիկական հսկողության ծառայություններ/Նռնաձոր | ԳՀ | դրամ | 205400 | 205400 | 1 |
| 71351540 | Տեխնիկական հսկողության ծառայություններ/Ագարակ | ԳՀ | դրամ | 589900 | 589900 | 1 |
| *Բաժին 06, խումբ, 04, 01 Փողոցների լուսավորում* | | | | | | |
| **Ծառայություններ** | | | | | | |
| 65311100 | Էլեկտրականության բաշխում | | | | 6000000 | |
| | | ՄԱ | դրամ | 6000000 | 6000000 | 1 |
| *բաժին 08, խումբ 02, դաս 04, 1. Մշակութային միջոցառումների իրականացում* | | | | | | |
| **Ապրանքներ** | | | | | | |
| 18931100 | Թիկնապայուսակ | | | | 1500000 | |
| | | ՄԱ | հատ | 5500 | 935000 | 170 |
| 03121200 | Ծաղիկներ | ՄԱ | հատ | 200 | 40000 | 200 |
| 03121210 | Ծաղկային կոմպոզիցիաներ | ՄԱ | հատ | 10000 | 100000 | 10 |
| 39513110 | Սփռոցներ | ՄԱ | հատ | 46000 | 46000 | 1 |
| 18531100 | Նվերներ և պարգևներ | ՄԱ | հատ | 379000 | 379000 | 1 |
| *բաժին 09, խումբ 01, դաս 01, Նախադպրոցական կրթություն* | | | | | | |
| **Ապրանքներ** | | | | | | |
| 44411740 | Զուգարանակոնք փոքր | | | | 3409200 | |
| | | ՄԱ | հատ | 23000 | 138000 | 6 |
| 44411300 | Լվացարան երկտեղանոց | ՄԱ | հատ | 28000 | 224000 | 8 |
| 39710000 | Խոհանոցի էլեկտրական սալօջախ | ՄԱ | հատ | 62000 | 248000 | 4 |
| 37531200 | Մանկական խաղահրապարակի սարքեր | ԳՀ | հատ | 1399600 | 2799200 | 2 |
| *բաժին 10, խումբ 07, դաս 01, Համայնքի սոց. Ծրագրեր* | | | | | | |
| **Ծառայություններ** | | | | | | |
| 65311100 | Էլեկտրականության բաշխում | | | | 1500000 | |
| | | ՄԱ | դրամ | 1500000 | 1500000 | 1 |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 փետրվարի 2019 թվականի N 26

## ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N 2-Ն որոշումը.

որոշում եմ՝

1.2018թ-ի տարեկան արդյունքների ամփոփմամբ ձեռք բերված հաջողությունների համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի «Հանգիստ,մշակույթ և կրոն(այլ դասերին չպատկանող)» (08-06-01-51) ծրագրի «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» (4727) հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել ԱԻՆ-ի Սյունիքի մարզային ՓԾ վարչության Մեղրիի ՀՓՋ-ի հինգ ծառայողների ՝յուրաքանչյուրին 20000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Գումարը փոխանցել Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի Ագարակի մասնաճյուղի կանխիկ գումարների ստացման 1150043120356000 հաշվեհամարին:

3.Գումարը ստանալու համար լիազորել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ՝ Մարգարիտա Թաթևոսյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 1
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի
2019թ. փետրվարի 1-ի թիվ 26 որոշման

Ցուցակ
Խրախուսանքի արժանացած ծառայողների

1.Վահե Սուրիկի Հովհաննիսյան
2.Կարեն Սուքիասի Գյուլասարյան
3.Գնել Սերգոյի Խաչատրյան
4.Հայկազ Սերյոժայի Գրիգորյան
5.Արթուր Լևոնի Դավթյան

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2019 թվականի N 27

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N 2-Ն որոշման 8-րդ կետի.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասում կատարել վերաբաշխում՝
Նվազեցնել <<Փողոցների լուսավորում>> (06.04.01.51) ծրագրի <<Էներգետիկ ծառայություններ>> (4212) հոդվածից 53000 (հիսուներեք հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի՝ <<Պարտադիր վճարներ>> (4823) հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2019 թվականի N 28

## ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N 2-Ն որոշումը.

որոշում եմ՝

1.Հայոց բանակի կազմավորման 27-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թ-ի բյուջեի «Հանգիստ,մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)» (08-06-01-51) ծրագրի «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» (4727) հոդվածից 360000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել Մեղրի համայնքում բնակվող 12 զոհված ազատամարտիկների կանանց ու մայրերին՝ յուրաքանչյուրին 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Գումարը փոխանցել Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի Ագարակի մասնաճյուղի կանխիկ գումարների ստացման 1150043120356000 հաշվեհամարին:
3.Գումարը ստանալու համար լիազորել Մեղրի համայնքի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Մարգարիտա Թաթևոսյանին:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 4
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ղեկավարի 2019թ. փետրվարի 4 -ի
թիվ 28 որոշման

Ցուցակ
Զոհված ազատամարտիկների կանանց ու մայրերի

1.Գևորգյան Գայանե
2.Գևորգյան Թամարա
3.Հայրապետյան Մարինե
4.Մարտիրոսյան Լաուրա
5.Հայրապետյան Տատյանա
6.Հակոբյան Էլմիրա
7.Ղարիբյան Իվետա
8.Մարգարյան Լենա
9.Ջավադյան Անահիտ
10.Մկրտչյան Վարդուշ
11.Արզումանյան Սոնա
12.Ղազարյան Թերեզա

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2019 թվականի N 29

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, ՀՀ կառավարության 8 նոյեմբերի 2012թ. N1617-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Արթուր Ստեփանյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2018թ. փետրվարի 1-ի N312-Տ հայտը և տեղական տորքի վճարման փաստը՝

որոշում եմ՝

Թույլատրել «ԱԳԱՐԱԿ ՏԱՔՍԻ» ՍՊ ընկերությանը (գրանցման համարը՝ 79.110.874957) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի անվանումը 2019 թվականի ընթացքում օգտագործել «ԱԳԱՐԱԿ ՏԱՔՍԻ» ՍՊ ընկերության ֆիրմային անվանման մեջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 փետրվարի 2019 թվականի N 30

# <<ԱԳԱՐԱԿ ՏԱՔՍԻ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Արթուր Ստեփանյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 1-ի N311-S հայտը և թվով 10 մեքենաների համար տեղական տուրքի վճարման փաստը՝

որոշում եմ՝

Թույլատրել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենց փողոցի թիվ 9/16 հասցեում գրանցված «ԱԳԱՐԱԿ ՏԱՔՍԻ» ՍՊ ընկերությանը (գրանցման համարը՝ 79.110.874957) 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու մարդատար-տաքսու ծառայության իրականացմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2019 թվականի N 31

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԱՆԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Լիանա Դավթյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 6-ի N373-Ֆ հայտը՝

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Լիանա Դավթյանին (գրանցման համարը՝ 79.781653) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենց փողոցի թիվ 12 շենքի հարևանությամբ գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը զբաղվելու ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 6
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2019 թվականի N 32

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՎԱՆԻՁՈՐ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 35 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սարգիս Ալյոշայի Հակոբյանի դիմումը (ծնված՝ 10.01.1961թ.): Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղի 5-րդ փողոցի թիվ 35 հասցեում գտնվող բնակելի տանը ամրակայված հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,05793 հա, որից 0,0472 հա մակերեսով հողամասը Սարգիս Հակոբյանի ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.01073 հա հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել Սարգիս Հակոբյանին որպես անհատույց սեփականություն:

Հաշվի առնելով, որ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 2008 թվականի հունիսի 10-ի «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՕ- 117-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով՝

որոշում եմ՝

1.Վերականգնել Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղի 5-րդ փողոցի թիվ 35 հասցեում գտնվող Սարգիս Ալյոշայի Հակոբյանի սեփականություն հանդիսացող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0,0472 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.01073 հա հողամասի հողհատկացման հիմքերը, ճանաչելով նրա սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ:

2.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 7
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 փետրվարի 2019 թվականի N33
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 30-ի N1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019թվականի բյուջեի <<Համայնքի սոցիալական ծրագրեր>> ծրագրի (10-07-01-51) այլ նպաստներ բյուջեից (4729) հոդվածից դրամական օգնություն հատկացնել ներքոհիշյալ քաղաքացիներին՝

1)Սյուզաննա Ջանյանին ՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
2)Սերյոժա Ստեփանյանին՝ 15 000 (տասնհինգ հազար ) ՀՀ դրամ,
3) Անուշ Գյուրջյանին 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,
4)Արմինե Ալեքսանյանին ՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (2019 թվականի հունվարից մինչև հունիս ամիսը ներառյալ), համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվող որդու՝ Արման Հովհաննիսյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,
5)Եղիսաբեթ Ղուկասյանին ՝ 30000 /երեսուն հազար / ՀՀ դրամ /2019թվականի հունվարից մինչև հունիս ամիսը ներառյալ/, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվող որդու՝ Արամ Թարվերդյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,
6)Ռեգինա Բաղդասարյանին՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (2019թվականի հունվարից մինչև հունիս ամիսը ներառյալ), համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվող որդու՝ Համլետ Բաղդասարյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,
7)Լիանա Ախպերջանյանին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ (2019թվականի հունվարից մինչև հունիս ամիսը ներառյալ) համայնքային ենթակայության մանկապարտեզի և արվեստի դպրոցի ծառայությունից օգտվող երեխաներ ՝ Աշոտ, Արմեն և Կարինա Գրիգորյանների համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,
8) Նունե Համբարձումյանի զեկուցագրի համաձայն՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ (2019 թվականի փետրվարից մինչև հունիս ամիսը ներառյալ), համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվող՝ Սոս Գևորգյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,

9)Համազասպ Մարտիրոսյանին՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ (2019 թվականի հունվարից մինչև մայիս ամիսը ներառյալ), համայնքային ենթակայության արվեստի դպրոցի ծառայությունից օգտվող որդու՝ Մովսես Մարտիրոսյանի համար, որպես համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար:

2.Համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի գումարը փոխանցել մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար ՀՀ կենտրոնական գանձապետարանի 900305000912 հաշվարկային հաշվին, իսկ արվեստի դպրոցի ծառայություններից օգտվողների համար ՀՀ կենտրոնական գանձապետարանի 900305000920 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 7
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 փետրվարի 2019 թվականի N 34

## <<ՅՈՒՔՈՄ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<ՅՈՒՔՈՄ>> ՍՊԸ-ի համայնքի ղեկավարին ուղղած՝ 2019թ.-ի փետրվարիի 1-ի N309 դիմումը.

որոշում եմ՝

1.Ձևակերպել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում <<ՅՈՒՔՈՄ>> ՍՊԸ-ի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը):
2.Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության ու գույքի կառավարման բաժնի պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 8
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 փետրվարի 2019 թվականի N 35

## <<ԹԱԹՍԹՈՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Թաթսթոուն>> ՍՊԸ-ի համայնքի ղեկավարին ուղղած՝ 2019թ.-ի հունվարի 29-ի N265 դիմումը.

որոշում եմ՝

1.Ձևակերպել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղում <<Թաթսթոուն>> ՍՊԸ-ի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը):
2.Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության ու գույքի կառավարման բաժնի պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 8
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2019 թվականի N 36

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԹԱՄԱՐԱ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը և Թամարա Զաքարյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 12-ի N444-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Թամարա Զարարյանին (գրանցման համարը 79.01026) Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Ադելյան փողոցի թիվ 15Ա շենքի հարևանությամբ գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը զբաղվելու ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 12
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2019 թվականի N 37

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Սամվել Օհանյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 12-ի N443-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Սամվել Օհանյան (գրանցման համարը՝ 79.00559) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոց տուն 21 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 12
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2019 թվականի N 38

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԺՈՐԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Ժորա Արզումանյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 12-ի N449-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Ժորա Արզումանյանին (գրանցման համարը՝ 79.00438) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Ադեյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 12
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2019 թվականի N 39

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը և Սամվել Օհանյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 12-ի N448-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Սամվել Օհանյանին (գրանցման համարը 79.00559) Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոց տուն 21 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 12
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2019 թվականի N 40

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2019 թվականի մարտի 20-ը նշանակել մրցույթի օր հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1)աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-4)

2)աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-6)

3)աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-4)

4)աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-2)

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Նշված մրցույթների անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Նելլի Մելքումյանին:

4.Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 13
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2019 թվականի N 41

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Էդգար Մարտրիոսյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. փետրվարի 14-ի N472-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Էդգար Մարտրիոսյանին (գրանցման համարը՝ 79.1019669) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Մ. Օհանջանյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2019 թվականի N42

## ՏԱԹԵՎԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Տաթևիկ Կոստանյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունվարի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Սյունիքի մարզի Մեղրի համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների Մեղրի համայնքի Լիճք գյուղական բնակավայրում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0516-0011,վարելահող անջրդի,0847 հա) հողամասը հանդիսանում է քաղաքացի Տաթևիկ Կոստանյանի սեփականությունը, ինչը, «Հողի հարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 13 110 (տասներեք հազար հարյուր տասը) ՀՀ դրամ, ինչը 2014- 2019թ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Տաթևիկ Կոստանյանը նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 13110 (տասներեք հազար հարյուր տասը) ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 4 114 (չորս հազար հարյուր տասնչորս) ՀՀ դրամի չափով:

2019 թվականի հունվարի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի փետրվարի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Տաթևիկ Կոստանյանը (հիմք՝ փոստային անդորրագիր՝AG008527725 AM): Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Տաթևիկ Կոստանյանի բացակայությամբ:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:
Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի՝հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:
Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:
Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին, 16-րդ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի Տաթևիկ Կոստանյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 17 224 (տասնյոթ հազար երկու հարյուր քսանչորս) ՀՀ դրամ, որից 13 110 (տասներեք հազար հարյուր տասը) ՀՀ դրամ որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 4 114 (չորս հազար հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (վճարման հաշվեհամար՝ 900305081037):
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տաթևիկ Կոստանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2019 թվականի N 43

## ՄԱՐԻԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Մարիետա Հակոբյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունվարի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Սյունիքի մարզի Մեղրի համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների Մեղրի համայնքի Լիճք գյուղական բնակավայրում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0537-0100,վարելահող անջրտի, 0,495 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-039-0512-0027 վարելահող անջրտի, 0,253 հա, կադասրային ծածկագիր՝ 09-039-0510-0018, վարելահող անջրտի, 0,925 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-039-0011-0029, տնամերձ, 0,012 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-039-0003-0008, վարելահող անջրտի, 0,282 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-039-0011-0028, տնամերձ, 0,1975 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-039-0011-0048, տնամերձ, 0,0339 հա) հողամասերը հանդիսանում է քաղաքացի Մարիետա Հակոբյանի սեփականությունը, ինչը, «Հողի հարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ:

Հողամասերի համար վճարման ենթակա հարկը կազմում է 21 486 ՀՀ դրամ (քսանմեկ հազար չորս հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ, ինչը 2015 - 2019թ.թ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Մարիետա Հակոբյանը նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 21 486 (քսանմեկ հազար չորս հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 7862 (յոթ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամի չափով:

2019 թվականի հունվարի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի փետրվարի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Մարիետա Հակոբյանը (հիմք՝ փոստային

անդորրագիր՝AG008513575 AM): Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Մարիետա Հակոբյանի բացակայությամբ:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի՝հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին, 16-րդ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի Մարիետա Հակոբյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 29 348 (քսանինը հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, որից 21 486 (քսանմեկ հազար չորս հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 7862 (յոթ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (վճարման հաշվեհամար՝ 900305081037):

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրեենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիետա Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. փետրվարի 15

ք. Մեղրի